

ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

ԼՈՒՄԻՆԵ ՄԻՆԱՍՅԱՆ

«Վենչուրային կապիտալ» հասկացության վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ սահմանումներ, սակայն դրանք այս կամ այն կերպ հանգում են վենչուրային կապիտալի գործառությային բովանդակությանը, այն է՝ համապատասխան դրամական միջոցների տրամադրմամբ օժանդակել որևէ ձեռնարկության (բիզնեսի) կայացմանը՝ վերջինիս կապիտալում որոշակի բաժնենասնակցություն ձեռք բերելու պայմանով¹: Վենչուրային կապիտալը սովորաբար միտված է գիտատեխնիկական նորույթների կիրառմանը, որը, բնականաբար, ենթադրում է բարձր ռիսկայնություն և ակնկալում է գերշահութաբերություն: «Վենչուրային կապիտալ» հասկացությունը առաջացել է «venture» բառից, որը նշանակում է ռիսկային ձեռնարկում կամ նախաձեռնություն:

Վենչուրային ներդրողները գործնականում նախընտրում են ներդրումներ կատարել այնպիսի ձեռնարկություններում, որոնց արժեքը գերազանցում չուկաներում (ֆոնդային բորսաներում) չեն շրջանառվում: Սրանք հիմնականում փոքր և միջին ձեռնարկություններ են (Unquoted/ Unlisted Companies), որոնց բիզնեսի կայացման համար վենչուրային ֆինանսավորումը անփոխարինելի և ամենաարդյունավետ միջոցն է: Նկատի ունենալով փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ռազմավարական նշանակությունը Հայաստանի համար՝ միանշանակ է, որ երկրում արդյունավետ վենչուրային համակարգի ներդրումը եականորեն կնպաստի բավարարելու փոքր և միջին ձեռնարկություններում ներդրումային ռեսուրսների նկատմամբ առկա պահանջարկը: Վենչուրային ներդրումների շնորհիվ բարելավվում և առավել արդյունավետ է օգտագործվում ձեռնարկությունների արտադրական, մարքեթինգային, սպասարկման և կառավարման ներուժը: Հայտնի է, որ Հայաստանն ավանդաբար ունեցել է և ներկայումս էլ ունի գիտատար ռեսուրսների համեմատաբար մեծ ներուժ, որը կարող է չափազանց կարևոր գործոն լինել վենչուրային ներդրումների համար: Միջազգային փորձը վկայում է, որ վենչուրային համակարգեր ունեցող երկրներում հիմնական գործոններից մեկը փոքր արտադրատեխնոլոգիական ինովացիոն ձեռնարկությունների կողմից իրականացվող գիտատեխնիկական մշակումների շուկայացման բարձր ներուժն է:

Գրեթե բոլոր զարգացած երկրներում վենչուրային կապիտալի ոլորտի զարգացումը պետականորեն մշտապես խթանվել է: Ոլորտի զարգացմանը նպաստող պետական քաղաքականությունը սովորաբար ներառում

¹ Տե՛ս «Վենչուրային համակարգը Հայաստանում». ներդրումային հայեցակարգ, Կորպորատիվ կառավարման կենտրոն, 2005 թ., էջ 3-55:

է տարբեր միջոցառումներ՝ սկսած պետական գործակալությունների անմիջական ֆինանսական ներգրավման տարբերակներից (մասնավոր ֆոնդերի վարկեր, երաշխիքներ, սուբսիդիաներ տրամադրող ֆինանսական աղյուր) մինչև հարկային արտոնությունները և ներդրումները խթանող հատուկ կառույցների ստեղծումը:

Պետության կողմից վեճչուրային ներդրումների խթանման առաջին օրինակները դիտվել են ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում դեռևս Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում մտահոգված էին, որ փոքր և նոր ստեղծված ձեռնարկությունները մեծ դժվարությամբ են արտաքին ֆինանսավորում հայթաթում: Պառլամենտական կոմիտեն առաջարկեց ստեղծել հատուկ կառույց, որը կֆինանսավորեր այդպիսի ձեռնարկությունների սեփական կապիտալում ներդրումները: Այդ առաջարկությունների և հետագա քննարկումների արդյունքում 1945 թ. «Bank of England»-ը և հինգ խոշորագույն մասնավոր բանկեր ստեղծեցին «Industrial and Commercial Finance Corporation»-ը², որը գոյություն ունի և արդյունավետ գործում է մինչ օրս: Այն բավականին հանրահայտ է ամբողջ աշխարհում «3i» անվամբ³:

Ի տարբերություն բրիտանացիների՝ ԱՄՆ-ում վեճչուրային հիմնադրամների գործունեությունը խթանելու մեկ այլ մոտեցում է կիրառվել: Այստեղ անմիջական աջակցություն են ցուցաբերում մասնավոր հիմնադրամներին՝ խուսափելով ամբողջապես պետական հիմնադրամներ⁴ ստեղծելուց: Բնագավառի քաղաքականությունն ուրվագծելիս նրանք այդ մոտեցումը հիմնավորում են ոլորտում ոչ շուկայական բնույթի մրցակցությունը բացառելու նպատակով: Այդպիսին է, օրինակ՝ «Small Business Investment Companies» (SBIC) ծրագիրը, որի նպատակն է պետական վարկային միջոցների հաշվին խրախուսել ուղղակի ներդրումները սեփական կապիտալում⁵:

Տարիների ընթացքում ակնհայտ դարձավ, որ վեճչուրային կապիտալի ոլորտի զարգացումը խրախուսելու համար պետական ֆոնդերի ներգրավումը ամենանախընտրելի տարբերակը չէ, և ավելին՝ որոշ դեպքերում այն շուկայի «աղավաղումների» պատճառ է դառնում: Այսպես, համարելով, որ խրախուսման այլ տարբերակներն ավելի արդյունավետ են, ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում ավելի մեծ դեր հատկացվեց բնագավառի օրենսդրական դաշտի բարելավմանը և օրենսդրական խոչընդոտների նվազեցմանը: Օրինակ՝ ԱՄՆ-ի կառավարությունը մեծ քայլ կատարեց՝ բարելավելով կենսաթոշակային հիմնադրամների ներդրումային գործունեությունը կարգավորող օրենսդրությունը՝ մասնավորապես ընդունելով «Կենսաթոշակային Վճարների ապահովագրման մասին» օրենքը (Employment Retirement Income Security Act), որը բույլ տվեց այդ հիմնադրամի «երկար փողերը»՝ կենսա-

² Policy towards private equity and venture capital.30.04.2003. Source: Polish Private Equity Association. Pioter Tamowicz, Phd.

³ www.3i.com

⁴ «Պետական հիմնադրամ» նշանակում է, որ այն ստեղծվում և դեկավարվում է կառավարության, տեղական հնքնակառավարման և նմանատիա այլ մարմինների կողմից հիմնականում պետական կամ համայնքային բյուջեի ֆինանսական միջոցներով:

⁵ Տե՛ս «Վեճչուրային համակարգը Հայաստանում»..., 2005 թ.:

թռշակային կուտակումները, ուղղորդել վենչուրային կապիտալի շուկա: Մեծ Բրիտանիայում վենչուրային ներդրումների խրախուսման նպատակով ստեղծվեց հարկային արտոնությունների բավականին կուռ համակարգ, որը ներառում է «Business Expansion Scheme», «Enterprise Expansion Scheme», «Venture capital Trust» և այլ ռեժիմները:

ԱՄ-ի և ՄԲ-ի շուկաների խրախուսման փորձը մասամբ ընդօրինակվել է նայրցամաքային Եվրոպայում, մասնավորապես՝ Հոլանդիայում, որտեղ, ինչպես և Բրիտանիայում, սկզբում հիմնական շեշտը դրվում էր պետական հիմնադրամների ներդրումների վրա: Սակայն որոշ ժամանակ անց այնտեղ մշակվեցին բազմաթիվ ծրագրեր, որոնք պետական կամ ոչ պետական երաշխիքներ են տրամադրում վենչուրային ներդրումների դեպքում:

Ֆրանսիայում և Գերմանիայում վենչուրային հիմնադրամներում ներդրում կատարող և այդ աղբյուրներից եկամուտ ստացող իրավաբանական և ֆիզիկական անձանց համար կիրառվում են հարկային արտոնություններ, որոնք հիմնականում արտացոլվում են շահարաժեշտությունների ստացվող եկամուտների և/կամ կապիտալի հավելածի հարկային նվազեցումների տեսքով: Գերմանիայում նույնպես գործում են ամերիկյան SBIC-ի նման ծրագրեր, օրինակ՝ TBG ծրագրով «Deutsche Ausgleichsbank»-ը ֆինանսավորում է նոր հիմնադրված տեխնոլոգիական ընկերությունները 1/1 ֆինանսական ծրագրով⁶:

Ականդինավյան երկրներում հիմնականում չեն կիրառվում հատուկ օրենքներ, որոնք կարգավորում կամ խթանում են վենչուրային հիմնադրամների գործունեությունը: Այնուամենայնիվ, ընդհանուր օրենսդրական դաշտը բավականին նպաստավոր է, քանի որ այս երկրներում ընդունված է պետական հիմնադրամների կիրառում վենչուրային խթանման նպատակով: Ֆինլանդիան հայտնի է մի շարք պետական և մասնավոր կառույցներով, որոնք խթանում կամ իրականացնում են վենչուրային ներդրումներ: Դրանք են՝ «National Technology Agency of Finland (tekes)», Employment and economic Development centres (T&E centre) և այլն:

Վերջին տարիներին վենչուրային կապիտալի և ուղղակի մասնավոր ներդրումների ոլորտները Եվրամիության հատուկ ուշադրության կենտրոնում են: Այսպես, 1998 թ.-ին Եվրոպական խորհրդուն ընդունեց «Risk Capital Action Plan»-ը, որի նպատակն է ստեղծել համաԵվրոպական համընդհանուր վենչուրային կապիտալի շուկա: Այն ներառում է օրենսդրական փոփոխություններ, ձեռնարկատիրության խթանում և մի շարք այլ ծրագրեր: Եվրամիությունը խթանում է վենչուրային կապիտալի շուկան՝ ակտիվորեն համագործակցելով Եվրոպական վենչուրային կապիտալ ասոցիացիայի (ԵՎԿԱ) հետ: Սակայն Եվրամիության այդ երկրների հարկային և օրենսդրական դաշտերի տարբերությունները Եվրամիության մյուս երկրներից բավականին բարդացնում են այս ոլորտի ընդհանուր կարգավորումը: ՄԲ-ն, Իռլանդիան և Լյուքսեմբուրգը համարվում են վենչուրային հիմնադրամների գործունեության համար ամենանպաստավոր պետու-

⁶ Տե՛ս «The Venture Capital Handbook». WB Bygrave, M. Hay, J. B. Peeters. Prentice Hall, Financial Times, 1999:

թյունները, իսկ Գերմանիան, Ավստրիան և Դանիան՝ ամենածանր օրենսդրական և հարկային դաշտ ունեցողները⁷:

Ինչ վերաբերում է Արևելյան Եվրոպայի երկրներին, ապա այստեղ ընտրվել է հարկային արտոնությունների ուղին: Մասնավորապես, եթե Հունգարիայի կառավարության համար պարզ դարձավ, որ վենչուրային հիմնադրամները կարող են սկզբունքային դեր խաղալ տնտեսական զարգացման գործում, այդ երկրի խորհրդարանը ընդունեց հատուկ օրենք, հանաձայն որի՝ վենչուրային հիմնադրամները անցնում են բավականին ծավալուն արտոնագրված գործընթացներով, սակայն փոխարենը սահմանվում են որոշակի հարկային արտոնություններ վերջիններիս համար:

Հիմնվելով Համաշխարհային բանկի մի շարք հետազոտությունների արդյունքների վրա՝ Հնդկաստանի կառավարությունը 1988 թ.-ին հանդես եկավ ռազմավարական նախաձեռնությամբ և ընդունեց հատուկ ընթացակարգեր, որոնք վերաբերում էին վենչուրային հիմնադրամներին: Այդ նախաձեռնության համաձայն՝ միայն բանկերը և այլ ֆինանսական հաստատություններն էին իրավասու հիմնադրելու վենչուրային հիմնադրամներ: Վենչուրային ներդրումները Հնդկաստանում կարելի է իրականացնել պետականորեն արտոնագրված վենչուրային հիմնադրամների միջոցով, որոնք պետք է գրանցված լինեն Հնդկաստանի արժեթղթերի և բորսաների հանձնաժողովում (SEBI): SEBI-ի արտոնագրած վենչուրային հիմնադրամների միջոցով ներդրումներ կատարելով՝ ընկերությունը ազատվում է ինչպես կապիտալի հավելածի, այնպես էլ շահաբաժններով ստացված եկամուտի արտահանման հարկերից: Նպատակ ունենալով խթանելու երկրի տնտեսական աննախադեպ աճը բարձր տեխնոլոգիաների ոլորտում՝ 2000 թ.-ին Հնդկաստանի կառավարությունը էականորեն նվազեցրեց վենչուրային հիմնադրամների հարկերը, ի հավելումն դրա՝ Հնդկաստանի կառավարությունը, հաշվի առնելով ինֆորմացիոն տեխնոլոգիաների դերը երկրի տնտեսության զարգացման մեջ, հիմնադրեց ինֆորմացիոն տեխնոլոգիաների և համակարգչային ծրագրերի ազգային վենչուրային կապիտալի հիմնադրամը (National venture Capital Fund for the Software and IT Industry, NFSIT): Այն ստեղծվել է մի շարք ֆինանսական կառույցների հետ համատեղ և գործում է Փոքր արդյունաբերական ոլորտների զարգացման բանկի (SIDBI) հովանավորությամբ: Հնդկաստանի վարչապետի նախաձեռնությամբ ստեղծված այս հիմնադրամը հիմնականում նպատակ ունի ներդրումներ անելու ծրագրային, ինտերնետային և այլ SS ոլորտի ենթակառուցյներում, որոնցից ակնկալվում է արագ զարգացում և տնտեսական աճ: Այն փակ տիպի հիմնադրամ է, ստեղծվել է 10 տարի ժամկետով, 1 մլրդ ռուփի (շուրջ 25 մլն դոլար) սկզբնական կապիտալով:

Ինչ վերաբերում է Չինաստանին, ապա, գիտակցելով խնդրի կարևորությունը, 2003 թվականին կառավարությունը ընդունեց օրենք, որով ամրագրվեցին Չինաստանի օրենսդրական դաշտի համար, կարելի է ասել, հեղափոխական սկզբունքներ կապիտալի հայրենադարձնան, կառավարիչ ընկերության օֆշորային գրանցման հնարավորության և այլնի վերաբերյալ⁸:

⁷ Տես նույն տեղը:

⁸ Տես «The New Economy and Venture Capital in China» Wei XIAO perspectives, vol. 3, № 6:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունները խրախուսում են զարգացող երկրներում վենչուրային հիմնադրամների ստեղծումը և հաճախ ֆինանսական մասնակցություն են ունենում դրանցում: Այդպիսի բավականին հաջող օրինակ է ՎԶԵԲ-ի (Վերակառուցման և զարգացման եկորապական բանկի) փորձը Ռուսաստանում, որտեղ վենչուրային հիմնադրամների մյուս մասը ֆինանսավորել են արևմտյան մասնավոր ներդրումային ընկերությունները: Վերջիններս ներդրումներ են կատարում զանազան ոլորտներում, օրինակ՝ բնական ռեսուրսների, փայտամշակման, հեռահաղորդակցության, ՉԼՍ-ների, լեղագործության, տրանսպորտի, անշարժ գույքի և այլն:

Վենչուրային ոլորտի զարգացումը խթանող առանձին պետական ինստիտուտներ ստեղծվել են մի շարք երկրներում, այդ թվում՝ Խորայելում, Սինգապուրում, Կանարյանում, Նոր Զելանդիայում, Ֆինլանդիայում:

Խորայելի վենչուրային շուկայի ծնավորման սկիզբը կարելի է համարել 1992-93 թվականները, երբ Խորայելի կառավարությունը որոշեց ստեղծել հիմնադրամների հիմնադրամ, որը հայտնի է Yozma Program անվանմամբ: Այդ նպատակով կառավարությունը հատկացրեց 100 մլն դոլար:

Yozma Program-ի շրջանակներում իրականացվում են բաժնային ներդրումներ հեռահաղորդակցման, տեղեկատվական տեխնոլոգիաների, դեղագործության, բիոտեխնոլոգիայի և ննան այլ ոլորտներում գործող բարձր աճ ունեցող ընկերություններում: Նախապատվությունը տրվում է բարձր տեխնոլոգիաներ օգտագործող, աճի հեռանկար ունեցող և արտահանմանը միտված ընկերություններին: Yozma-ի ներդրումներն իրականացվում են զարգացման տարբեր փուլերում գտնվող ընկերություններում, սակայն հիմնական շեշտը դրվում է նոր ստեղծվող (start-up) ընկերությունների վրա: Սկզբնական ներդրումների ժամանակը յուրաքանչյուր ընկերության գծով տատանվում է 1 մլն-ից 6 մլն դոլարի սահմաններում, որից հետո կարող են իրականացվել նաև լրացուցիչ ներդրումներ: Yozma-ն, ներդրում իրականացնելով ընկերությունում, նպատակ ունի դաշնայիւ տվյալ ընկերությունում գլխավոր կամ խոշոր ներդրող, ինչպես նաև ունենալու իր ներկայացուցիչը ընկերության տնօրենների խորհրդում: Yozma-ն միևնույն ժամանակ ակտիվություն համագործակցում է ընկերությունների հետ՝ տրամադրելով լայնածավալ խորհրդատվական և այլ ծառայություններ:

Ներկայումս Խորայելի վենչուրային շուկան համարվում է ամենազարգացածներից մեկը աշխարհում: Այստեղ գործում է շուրջ 80 վենչուրային հիմնադրամ: Սրանց կառավարման ներքո գտնվող կապիտալը գերազանցում է 10 մլրդ դոլարը, որը ներդրված է ավելի քան 1000 զարգացող ընկերություններում: Դրանցից շատերը զարգացած շուկաներում հաջողությամբ իրականացրել են իրենց բաժնետոմսերի հրապարակային առաջարկ: Ներկայումս 7 տասնյակ ընկերություններ ցուցակված են NASDAQ-ում, իսկ շուրջ 30 ընկերություններ՝ եվրոպական բորսաներում: Խորայելը NASDAQ-ում ցուցակված ոչ ամերիկյան ընկերությունների թվով համարվում է երկրորդ Կանադայից հետո:

Ֆինլանդիայի Finnvera Oy-ը՝ որպես հիմնադրամների հիմնադրամ, իրականացնում է անուղղակի ներդրումներ նոր ստեղծված ընկերություններում: Բացի վերը նշվածներից՝ Finnvera-ն՝ Ֆինլանդիայի տնտեսական

զարգացման բանկը և արտահանման վարկավորման գործակալությունը, նույնպես ակտիվորեն գործում է վենչուրային ներդրումների ոլորտում: Դրանց հիմնական խնդիրներից մեկը փոքր և միջին բիզնեսի զարգացման համար ռիսկային ֆինանսավորում տրամադրելն է:

Սինգապուրը 1980-ականների կեսերին սկսեց իրականացնել լայնածավալ աշխատանքներ, որոնք ուղղված էին տնտեսության վերափոխմանը, տնտեսական աճի և արտահանման խթանմանը: Ղա ներառում էր նաև Տնտեսական զարգացման բանկի վենչուրային հիմնադրամի (Economic Development Bank Venture Capital Fund) ստեղծումը, որի կայիտալը կազմում էր 100 մլն դոլար:

1994 թ. հիմնադրվեց Ռեգիոնալ Ներդրումային ընկերությունը (Regional Investment Company)՝ 100 մլն սինգապուրյան դոլար կայիտալով, որի նպատակն էր աջակցել բարձր աճի հեռանկար ունեցող ՓՄՁ-ներին տարածաշրջանում ընդլայնվելու գործում:

1999 թ. ստեղծվեց Techno-prenreurship Investment Fund (TIF) հիմնադրամը՝ 1 մլրդ ԱՄՆ դոլար կայիտալով: Այն պետք է կառավարվեր Ազգային գիտությունների և տեխնոլոգիաների խորհրդի ներքո ստեղծված TIF Ventures-ի կողմից: Խորհրդի նպատակն էր խթանել բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված ձեռնարկատիրությունը և զարգացնել վենչուրային ներդրումների ոլորտը:

1999 թ. ստեղծվեց ևս մեկ հիմնադրամ՝ Venture Investment Support for Startups, որը պետք է գլխավորապես կենտրոնանար բարձր տեխնոլոգիաների ոլորտում նոր ստեղծվող ընկերություններում բաժնային ներդրումների իրականացման վրա՝ փորձառու վենչուրային ներդրողների հետ համատեղ:

Սինգապուրի վենչուրային ոլորտի ծևավորման գործում պետական մասնակցության մեջ չափի մասին է խոսում այն հանգամանքը, որ 2000 թ. հիմնադրամների մոտ 20 տոկոսը (կամ 7.4 մլրդ ԱՄՆ դոլար կայիտալը) ստեղծվել էր պետական ներդրումների հաշվին: 2001 թ. Սինգապուրուն վենչուրային հիմնադրամներից կառավարվող ընդհանուր կայիտալը գնահատվում էր շուրջ 13.7 մլրդ սինգապուրյան դոլար՝ 1983 թ.-ի 48 մլն-ի փոխարեն:

Կանադայում վենչուրային ոլորտի զարգացմանն ուղղված ամենախոշոր պետական նախաձեռնությունը եղել է 1993 թ. Labor Sponsored Venture Capital Corporations (Labour funds) ստեղծումը, որի նպատակն էր նպաստել փոքր և միջին ընկերություններում մանր ներդրողների մասնակցության ընդլայնմանը: Labour հիմնադրամները մանր ներդրողներին առաջարկում էին զգալի հարկային արտոնություններ, սակայն միաժամանակ կար ներդրումների որոշակի նվազագույն ժամկետ:

2006 թ. Կանադայում ստեղծվել է նաև GO Capital co-investment fund՝ 50 մլն դոլար կայիտալով, որի նպատակը թվերեկում բարձր տեխնոլոգիաների ոլորտում ստեղծվող ընկերությունների զարգացման խթանումն է:

Ամփոփելով վենչուրային համակարգերի առանձնահատկությունները տարբեր երկրներում՝ ներկայացնենք նաև Եվրոպական վենչուրային կայիտալի ասոցիացիայի՝ 21 երկրներում կատարած հետազոտությունների

հիման վրա մշակված վենչուրային կապիտալի համար «անթերի» օրենսդրական և հարկային դաշտի հիմնական բաղկացուցիչները⁹:

1. Հիմնադրամների օգտագործած իրավական կառուցվածքը (իրավական կարգավիճակը) պետք է համապատասխանի ինչպես երկրի ներքին, այնպես էլ օտարերկրյա ներդրողների պահանջներին: Յակառակ դեպքում այդ պահանջները բավարարելու համար օգտագործվում են արտասահմանյան և օֆշորային կառուցները, ինչը հանգեցնում է գործառնական ծախսերի կտրուկ աճի:

Այս առումով՝

➤ Պետք է կիրառվի «թափանցիկ» հարկային դաշտ՝ երկակի հարկումից խուսափելու նպատակով: Օրինակ՝ ներդրումը ընկերություններում հիմնադրամի միջոցով պետք է համարժեք լինի անմիջական ներդրմանը:

➤ Օտարերկրյա ներդրողը պետք է ազատվի մշտական ներկայացուցչություն հիմնադրելուց: Յակառակ դեպքում կարող է ենթարկվել կրկնակի հարկման:

➤ Պետք է հնարավորություն տրվի կիրառելու արտոնյալ հարկային ռեժիմ հիմնադրամների կառավարիչների՝ ինչպես տոկոսային, այնպես էլ կառավարման վճարներից ստացված եկամուտների նկատմամբ:

➤ Յարկավոր է հնարավորինս ազատականացնել հիմնադրամների կարգավորումը ներդրումների ոլորտի ընտրության առումով:

2. Կենսաթոշակային հիմնադրամներին և ապահովագրական ընկերություններին պետք է թույլ տալ վենչուրային ներդրումներ կատարելու մասնագիտացված հիմնադրամների միջոցով:

3. Յակամենաշնորհային և կորպորատիվ կլանումները կարգավորող օրենսդրությունը պետք է լինի ավելի «ազատական» վենչուրային գործարքների դեպքում:

4. Բաժնետոմսերի օացիոնները չպետք է հարկվեն թողարկելու, տրամադրելու և իրականացնելու պահին: Յարկումը պետք է կատարվի միայն բաժնետոմսերը իրացնելիս:

5. Զեռնարկատիրությունը պետք է խթանվի պարզ և հստակ օրենսդրական դաշտի կիրառմամբ: Զեռնարկության հիմնադրումը չպետք է ժամանակատար և ծախսատար լինի:

6. Եկամտահարկի մակարդակը պետք է լինի չափավոր և նպաստի բարձրակարգ մասնագետների ներգրավմանը վենչուրային ծրագրերում:

7. Կապիտալի հավելամբ հարկումը պետք է լինի արտոնյալ պայմաններով՝ հատկապես ցուցակված ընկերություններում ներդրումներ կատարելու դեպքում:

8. Յարկային հատուկ արտոնություններ պետք է տրամադրվեն մասնավոր անձանց, որոնք ներդրում են կատարում վենչուրային հիմնադրամներում:

9. Ուղղակի ֆինանսական և հարկային արտոնություններ պետք է տրամադրվեն գիտատեխնիկական բնույթի հետազոտություններ իրականացնող ընկերություններին:

⁹Տե՛ս «Benchmarking European Tax and Legal Environments». The European Venture Capital Association, 2007:

10. Ընկերությունները, որոնք ֆինանսական դժվարություններ են կրում, պետք է պաշտպանված լինեն սնանկացումից:

ЛУСИНЕ МИНАСЯН – *Международная практика мотивации венчурных инвестиций.* – В статье анализируется суть венчурных инвестиций, международная практика их мотивации, а также роль, которую они играют в развитии финансового рынка, и их значение для экономики в целом. Особое внимание уделяется преимуществу венчурных инвестиций с точки зрения институциональных инвесторов.

LUSINE MINASYAN – *International practice of motivating venture funds.* – The present paper considers venture funds, their types, functions and importance in financial markets and the economy as a whole. The paper also discusses the advantages of investment funds, the economic role of institutional investors, as well as the best international practice.